Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Ն. Գետաշենի Ա. Եղիազարյանի անվ. թիվ 2 միջն. դպրոց

Թեմա՝ Գնահատում, գնահատման տեսակներ, գնահատման առանձնահատկություններն ու չափանիշները տարրական դասարաններում:

Վերապատրաստող, մենթոր՝ Սեդրակյան Մարիամ

Ուսուցիչ՝ Մարտիկյան Անգին

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն

Գլուխ 1 Գնահատումը, դրա նպատակը և գործառույթները

Գլուխ 2 Գնահատման սկզբունքները, ձևերն ու տեսակները

Գլուխ 3 Գնահատման ձևերի առանձնահատկությունները և չափանիշները տարրական դասարաններում

Եզրակացություն

Օգտագործված գրականության ցանկ

Ներածություն

Հայաստանի Հանրապետության նոր սոցիալ-տնտեսական պայմանները բարձր պահանջներ են առաջադրում ինչպես մատաղ սերնդի գիտելիքների, կարողությունների, հմտությունների և արժեքային համակարգի իրականացման, այնպես էլ կրթության բովանդակության, նրա կառուցվածքի, մեթոդների ու միջոցների բարեփոխման պատասխանատուններին:

Այժմ մանկավարժներին մտահոգում են 5 հիմնական խնդիրներ՝

- աշակերտակենտրոն ուսուցում
- ուսուցման պլանավորում
- կապի միջոցներ և տեխնոլոգիաներ
- գնահատում
- ուսումնական սարքավորումներ:

Այս աշխատությունը միտված է բացահայտելու կրտսեր դպրոցականի անձի ձևավորման վրա գնահատման ձևերի ազդեցությունը, գնահատման դերը դաստիարակության կարևորագույն գործում:

Դաստիարակությունը այսօր դարձել է դժվարին, սակայն ոչ անհնարին երևույթ: Դասվարը պարտավոր է մշտապես գնահատել սովորողների ուսումնական աշխատանքը: Հետևողական խրախուսանքը կտա իր դրական արդյունքը՝ անընդհատ երեխային համեմատելով ինքն իր հետ:

Այս պարագայում, նույնիսկ ամենաչարաճճի կամ ամենալռակյաց աշակերտը կվերափոխվի, քանզի կհավատա և կվստահի իր ուսուցչի սիրուն:

ՈՒսուցիչն էլ իր հերթին իր խոսքով, շարժուձևով օրինակ կդառնա երեխայի համար:

ՈՒսուցման ամենակարևոր բաղադրիչներից է գնահատումը:

Գնահատումը բազմաբնույթ եզրույթ է, որը սահմանվում է, որպես տեղեկությունների ձեռքբերման գործընթաց, որն օգտագործվում է սովորողների ուսումնառության, առարկայական ծրագրերի և պլանների, ինչպես նաև կրթական քաղաքականության մասին որոշումներ կայացնելու համար: Գնահատումը կարող է լինել հայացքով, խոսքով, նյութական կամ ոչ նյութական: Այսինքն՝ որևէ գործընթաց զարգացնելու համար հարկավոր է գնահատման որոշակի համակարգ: Մեր հետազոտության թեման սովորողի գիտելիքները, կարողություններն ու հմտությունները գնահատելն է: ՈՒսումնական գործընթացում գնահատումը նշանակում է քանակական և որակական տվյալների նպատակային հավաքում: Ավելի հեշտ է գնահատել երեխայի չիմացածը, քան նրա իմացածը, որովհետև իմացության դրսևորման ձևերը տարբեր պարագաներում տարբեր են:

Մտածական դատողությունը և տրամաբանական մտածողությունը ուսումնասիրել է Արիստոտելը դեռևս Ք. Ա. 2000թ. :

Դատողություն անելը, վճռելը և խնդիր լուծելը համարվում են մարդկային գործունեության առանցքային հմտություններ:Այստեղ անչափ կարևոր են հատկապես երեխայի վաղ տարիքի ձեռքբերումների ուղղորդումը: Արտաքին

աշխարհից եկող ազդակները ունեն իրենց չերևացող, բայց էական ազդեցությունը երեխայի անձի ձևավորման գործում:

ՈՒսուցչի խնդիրն է աշակերտական գնահատման միջոցով պահպանել.

- մոտիվացիան՝ պատրաստակամությունը, ոգևորվածությունը,
- ինքնագնահատումը, որը գնահատման կարևորագույն միջոցներից է, երբ երեխան ինքն է գրտակցում իր ուժեղ և թույլ կողմերը և աշխատում համապատասխան ուղղություններով,
- զգացմունքները, տրամադրությունը, որից կախված է կրտսեր դպրոցականի ներկայանալը դասին և ներկայացնել իր սովորածը:

Այս չափազանց բարդ և բազմակողմանի իրավիճակում հատկապես կրտսեր դպրոցականի մոտ, ով դեռ հմտացած չէ արտաքին ազդակների անտեսումը տիրապետելուն կամ ազդեցության վերագնահատմանը, մեծագույն խնդիրը մնում է լուծելու ուսուցչին՝ լավագույն արդյունքի հասնելու համար:

Գլուխ 1 Գնահատումը, դրա նպատակը և գործառույթները

Գնահատումը սովորողի մասին տեղեկություն ստանալու, հավաքելու, վերլուծելու և դրա հիման վրա հանրակրթության բովանդակային և կազմակերպչական աշխատանքների արդյունքներն ի մի բերելու և վերահսկելու գործընթաց է:

Գնահատման հիմնական նպատակը սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացման ու տիրապետման աստիճանի, նրանց անձնային որակների ստուգումն է, ինչպես նաև ուսման որակի բարելավումն ու վերահսկումը:

Հիմք ընդունելով հանրակրթության բովանդակությանը ներկայացվող պահանջները, ուսումնական գործընթացի կազմակերպման ու վերահսկման բարեփոխված մոտեցումները և մեթոդները՝ սովորողների ընթացիկ գնահատման համար սահմանվում են հետևյալ առաջնային նպատակները.

1. սովորողի ուսումնական գործունեության և առաջադիմության ընթացքի արձանագրումը, թերությունների բացահայտումն ու շտկումը:
2. հանրակրթության պետական կրթակարգով և միջնակարգ կրթության պետական կրթական չափորոշիչներով ամրագրված հանրակրթության բովանդակային բաղադրիչների յուրացման ընթացքի բացահայտումը, ինչպես նաև դրանց փուլային ստուգումն ու գնահատումը:

Ընթացիկ գնահատման համակարգի հիմքում ընկած են հավաստիության, հիմնավորվածության, հուսալիության, մատչելիության, արդարության և թափանցիկության սկզբունքները:

Գնահատումը կարող է լինել օբյեկտիվ կամ սուբյեկտիվ: Օբյեկտիվ գնահատումը կախված չէ գնահատողի անձնական մտածողությունից կամ վերաբերմունքից, օրինակ՝ պատասխանի ընտրությամբ առաջադրանքը: Գնահատումը սուբյեկտիվ է, երբ այն կախված է գնահատողի անձնական դատողություններից, սկզբունքներից ու վերաբերմունքից: Սուբյեկտիվ են

համարվում բանավոր հարցումները, պատասխանի շարադրանքով առաջադրանքները, կամ որոշ գործնական աշխատանքներ:

Գնահատման հիմնական գործառույթներն են՝

1. սովորողի հիմնական գործունեության և առաջադիմության գնահատումը, կրթական մի աստիճանից մյուսին անցնման հնարավորության ապահովումը, կրթության շարունակականության խրախուսումը,
2. սովորողին ներկայացվող պահանջների կատարման, ուսումնական նյութի յուրացման աստիճանի բացահայտումը,
3. դպրոցի գործունեության արդյունավետության բացահայտումը, ուսուցիչ-սովորող համագործակցային հարաբերությունների զարգացումը,
4. սովորողի հետ տարվող անհատական աշխատանքի բովանդակության և ծավալի ճշգրտումը,
5. սովորողի անձնային որակների ձևավորման և վարքագծի բացահայտմանը նպաստելը, ինքնաճանաչողության ապահովումը,
6. մանկավարժների վերապատրաստման և մասնագիտական աճի ապահովումը,
7. չափորոշիչների, առարկայական ծրագրերի, դասագրքերի և ուսումնական այլ նյութերի, ուսուցման մեթոդների կատարելագործման հիմքերի ապահովումը,
8. հանրակրթության բարեփոխման ուղղությունների հստակեցումը, բովանդակության արդիականացումն ու կրթական համակարգի համապատասխանեցումը միջազգայնորեն ընդունված չափանիշներին,
9. սովորողի ուսումնական գործունեության արդյունքների որակավորումը,
10. դպրոցի հանդեպ ծնողների վստահության ձևավորումն ու ամրապնդումը:

Գլուխ 2 Գնահատման սկզբունքները, ձևերն ու տեսակները

Վավերություն

Վավերություն նշանակում է, որ գնահատումը պետք է ճշգրտությամբ նկարագրի և/կամ չափի սովորողների կողմից նախատեսվող կրթական վերջնարդյունքների տիրապետման կամ ձեռքբերման աստիճանը, այլ ոչ՝ որևէ այլ չնախատեսված վերջնարդյունքներինը կամ կողմնակի գործոններինը: Վավեր է այն գնահատումը, որը գնահատում է այն, ինչի համար նախատեսված է վերջինս:

Հուսալիություն

Հուսալիությունը նշանակում է, որ գնահատումը պետք է տա արդյունքներ, որոնք միասնական/հաջորդական և կայուն են: Հուսալի գնահատումն այն է, որը կախված է իր վերջնարդյունքներից, իսկ այդ վերջնարդյունքները պետք է կրկնօրինակելի լինեն, եթե գնահատման նույն ընթացակարգը կրկին կիրառվի նույն սովորողի նկատմամբ և ուրիշ գնահատողի կողմից:

Ինչպես և վավերության պարագայում է, հաճախ կարծիք է հնչում, թե հուսալիությունը վերաբերում է միայն քանակական գնահատումներին: Դա ճիշտ չէ: Որակական գնահատումների արդյունքները ևս կարող են լինել հուսալի կամ անհուսալի: Օրինակ՝ դրանք անհուսալի կարող են լինել այն դեպքում, երբ գնահատողի դատողությունները/տված գնահատականները ժամանակի ընթացքում փոփոխվեն և հետևողական չլինեն:

Հավասարություն

Հավասարություն նշանակում է, որ գնահատականը պետք է լինի արդար և չպետք է առավելություն տա կամ անբարենպաստ վիճակ ստեղծի որևէ խմբի կամ անհատի համար: Գնահատման անաչառ մեթոդը երաշխավորում է, որ բոլոր սովորողներն՝ անկախ իրենց ժողովրդագրական կամ այլ առանձնահատկություններից, կարողունակության իրենց մակարդակը դրսևորելու հավասար հնարավորություն ունենան: Գնահատման ժամանակ անհավասարություն կարող է առաջանալ տարբեր պատճառներով: Օրինակ, եթե գնահատումը պահանջում է սովորողներից տանն ունենալ տեղեկատվության մեծածավալ աղբյուրների հասանելիություն, ապա դա կարող է խտրական լինել նրանց հանդեպ, ովքեր նման հնարավորություններ չունեն:

Թափանցիկություն կամ անկողմնալակություն

Թափանցիկություն նշանակում է, որ սովորողները պետք է գնահատման վերաբերյալ նախապես ստանան անթաքույց, լիարժեք և հստակ տեղեկատվություն: Գնահատման թափանցիկ գործընթացն այն գործընթացն է, երբ

սովորողները նախապես տեղեկացվում են գնահատման նպատակի, գնահատվող կրթական վերջնարդյունքների մասին, ինչպես նաև կիրառվելիք գնահատման ընթացակարգի և գնահատման չափանիշների մասին: Այն մեթոդները, որոնք սովորողից պահանջում են գուշակել, թե ինչ է իրենցից պահանջվում գնահատման լավ արդյունք ունենալու համար, թափանցիկ չեն:

Օբյեկտիվություն

Օբյեկտիվ գնահատումը հաճախ ասոցացվում է քանակական տվյալների հետ, որոնք ապահովում է սովորողը՝ պատասխանելով հարցերի և համանման վարժություններ կատարելով, երբ միայն մեկ պատասխանն է ճիշտ և կարող է հեշտությամբ որակվել որպես ճիշտ. շատ դեպքերում դա կատարվում է որևէ անձի կողմից (ուսուցիչ, սովորող, հավասարակից/համադասարանցի կամ արտաքին գնահատող), թեև որոշ դեպքերում դա կարող է արվել մեխանիկորեն (օրինակ՝ համակարգչային ծրագրով): Այդուհանդերձ, օբյեկտիվ գնահատումներ կարելի է կատարել ոչ միայն քանակական տվյալների, այլ նաև որակական տվյալների հիման վրա: Սա վերաբերում է այն դեպքերին, երբ որակական նյութերի մեկնաբանման կամ կոդավորման համար կիրառվող դասակարգումները հստակ ու աներկբա սահմանված են և շատ քիչ տեղ է թողնված անորոշության կամ անձնական մեկնաբանության համար (օրինակ՝ եթե հստակ և թափանցիկ չափանիշներ են կիրառվում թղթապանակը գնահատելիս, ապա գնահատումն օբյեկտիվ է):

Իրագործելիություն

Իրագործելիության սկզբունքը նշանակում է, որ կիրառվող գնահատման մեթոդը պետք է լինի իրատեսական՝ հաշվի առնելով համապատասխան ռեսուրսները, ժամանակն ու գործնական սահմանափակումները: Գնահատման իրագործելի ընթացակարգը չի կարող ոչ ողջամիտ պահանջներ առաջադրել՝ սովորողին կամ գնահատողին հասանելի ռեսուրսների կամ ժամանակի առումով: Այն սահմանափակումները, որոնք մեթոդն անիրագործելի են դարձնում, ամենայն հավանականությամբ, այդ մեթոդը կդարձնեն նաև անհուսալի և անվավեր:

Պարզություն և մատչելիություն

Գնահատումը տալիս է հստակ և թափանցիկ տեղեկատվություն, մեծացնում է կրթական գործընթացում բոլոր մասնակիցների ներգրավվածությունն ու պատասխանատվությունը:

Այս սկզբունքը ենթադրում է, որ գնահատման նպատակներն ու ընթացակարգերը պետք է լինեն հստակ, հրահանգները՝ հստակ և ճշգրիտ, արդյունքները՝ օգտակար և մատչելի: Գնահատման գործընթացում կասկած չպետք է լինի դրա

նպատակահարմարության և կոռեկտության վերաբերյալ: Իր հերթին, կրթական գործընթացի մասնակիցների միջև վստահության և փոխգործակցության ձեռքբերումը կբարձրացնի նրանց ներգրավվածությունը և դրականորեն կազդի ուսման արդյունքների վրա:

ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

Ձեւավորող գնահատումը ուսուցչի կողմից գնահատման 5 բաղադրիչների պլանավորված եւ պարբերական օգտագործումն է ամենօրյա աշխատանքում :

• Ուսուցչի կողմից արդյունավետ հետադարձ կապի ապահովում:

• Սովորողների ակտիվ մասնակցություն սեփական ուսումնառության գործընթացին:

• Ուսուցման գործընթացի ճշգրտում եւ շտկում՝ հաշվի առնելով գնահատման արդյունքները:

• Գնահատման՝ սովորողների մոտիվացիայի եւ ինքնագնահատականի վրա խորքային ազդեցության գիտակցում, որն իր հերթին կարեւոր ազդեցություն ունի ուսուցման արդյունավետության վրա:

• Սովորողների կողմից իրենց գիտելիքները ինքնուրույն գնահատելու ունակության ձեւավորում:

Ձեւավորող գնահատման առանձնահատկությունն այն է, որ գնահատման հնարները կիրառվում են յուրաքանչյուր դասին: Նշանակում է՝ ուսուցիչը եւ սովորողներըկարող են արդեն ամենավաղ փուլերից սկսած՝ ազդեցություն ունենալ ուսուցման եւ առհասարակ կրթության որակի բարելավման վրա: Ձեւավորող գնահատումը կիրառվում է թե՛ ուսուցչի, թե՛ սովորողի համար ընդունելի հնարներով:

Ուսուցման գործընթացում գնահատման օբյեկտը սովորողի գործունեությունն է (ոչ թե սովորողը), որն ուղղված է սովորողի ուսումնառության նպատակի իրագործմանը: Հետեւաբար, գնահատման բոլոր ձեւերի ու տեսակների հիմքը ուսուցման նպատակի ձեւակերպումն է: Դասի հիմքը ուսուցման նպատակն է. եւ՛ ուսուցչի եւ՛ սովորողի ողջ գործունեությունը պետք է ուղղված լինի այդ նպատակի իրագործմանը: Նպատակով են պայմանավորվում դասի ընթացքը, մեթոդների, միջոցների ու գնահատման ընտրությունը: Յուրաքանչյուր դասին ուսուցչի համար կարեւոր է խորհել հետեւյալ հարցերի շուրջ.

• Որքանո՞վ են սովորողները հասկացել անցած նյութը:

• Ինչպե՞ս կարող եմ ստուգել:

• Ո՞ր առաջադրանքն էր դժվար սովորողների համար:

• Եթե առաջադրանքը դժվարություն է առաջացրել, ապա ի՞նչ պետք է փոխել դասավանդման մեթոդներում:

Գոյություն ունեն սովորողների ակտիվության մի քանի ուղղություններ.

• ուսուցման նպատակների եւ արդյունքների ընկալում,

• սովորողների կողմից գնահատման չափանիշների ընկալում,
• ուսուցչի կողմից համապատասխան հնարների կիրառում:
Դասի նպատակի ընկալումը թույլ է տալիս սովորողին դառնալ գործընթացի կազմակերպման գործուն մասնակիցը: Վերջնարդյունքները եւս պետք է հասկանալի լինեն սովորողներին՝ նրանց դարձնելով գնահատման չափանիշների մշակման մասնակից: Նպատակներն ու ակնկալվող արդյունքները պետք է ակնառու ներկայացված լինեն (գրատախտակին, պաստառին, էկրանին եւ այլն), որպեսզի ուսուցիչն ու սովորողները հնարավորություն ունենան անդրադառնալու դրանց եւ ստուգելու իրենց ձեռքբերումները: Ձեւավորող գնահատումը ուսուցչի եւ սովորողների համատեղ հետադարձ կապի

Միավորային գնահատում

Ամփոփիչ/միավորային գնահատումն ուսումնառության ընթացքում սովորողի ձեռքբերումների մակարդակը թվանշանով արտահայտելն է՝ համաձայն առարկայական չափորոշչի: Ա. Էյնշտեյնն ասել է <<**Դասարանում յուրաքանչյուրը հանճարեղ է, բայց եթե դուք ձկանը պետք է գնահատեք ծառի վրայով սողալու կարողության համար, ապա նա ամբողջ կյանքում կտառապի այն մտքից, որ ինքն անկարող է**>>: Այսպիսով, միավորային գնահատումը պետք է լինի հնարավորինս օբյեկտիվ և հնարավորություն տա ստուգելու ցանկացած սովորողի իրական կարողությունները:

- Միավորային գնահատման կիրառման դեպքում սովորողի ուսումնառության արդյունքների քանակական ցուցիչը գնահատականն է:
- Գնահատականը գնահատման գործընթացի նիշային արտահայտությունն է՝ միավորներով:
- Միավորային գնահատումը կիրառվում է 5-րդ դասարանի երկրորդ կիսամյակից սկսած:
- Միավորային գնահատման դեպքում կիրառվում է սովորողի ուսումնառության արդյունքների գնահատման 10-միավորային սանդղակ՝ որտեղ որևէ նիշ անբավարար գնահատական չէ:
- Միավորային գնահատման արդյունքները գրանցվում են էլեկտրոնային դասամատյանում:
- Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի միավորային գնահատումն իրականացվում է գնահատման ընդհանուր սկզբունքով՝ 10 միավորային սանդղակով:

Հիմնական գործառույթները

- Վերահսկող
- Ուսուցանող
- Կարգավորող
- Դաստիարակող
- զարգացնող

Միավորային գնահատումը ունի վերահսկող դեր: Դրա նպատակն է թվանշանների միջոցով գնահատել ուսումնական գործընթացում աշակերտի ձեռքբերումները, որոնք սահմանված են չափորոշիչներով և ծրագրերով:

Այն նախատեսվում է կիրառել ուսումնական որևէ թեմա կամ ենթաթեմա անցնելուց և ուսումնացիրելուց հետո:

Միավորային գնահատումը ունի «մրցակցային» բնույթ: Ուսուցչի նշանակած գնահատականն օբյեկտիվորեն հարաբերական է: Աշակերտի պատասխանին միավոր վերագրելիս ՝ ուսուցիչն առաջնորդվում է մյուս աշակերտների պատասխանների հետ համեմատության սկզբունաով, հետևաբար, այս դեպքում առավել կարևոր է դառնում արդարության սկզբունքը:

Միավորային գնահատման ներկայումս կիրառվող տեսակներն են.

Միավորային գնահատումը կարող է իրականացվել գնահատման հետևյալ ձևերով՝

1) **թեստ.**
2) **բանավոր հարցում.**
3) **գրավոր աշխատանք.**
4) **գործնական (լաբորատոր) աշխատանք.**

Գլուխ 3 Գնահատման ձևերի առանձնահատկությունները և չափանիշները տարրական դասարաններում

Երբ ասում ենք մարդ՝ նախ և առաջ հասկանում ենք ֆիզիկական անձ, բանական էակ, ապա անհատ իր ուրույն անհատականությամբ, որն հանդիսանում է հասարակության լիիրավ անդամ: Անհատի զարգացումն ու կայացումը սկսվում է ծննդյան պահից: Տարրական դպրոցը հանդիսանում է այս մեծ շղթայի առաջին ու գլխավոր մասը:

Դասվարն համարվում է կրտսեր դպրոցականի առաջին քայլերն ամուր դնելու կարևորագույն հենարանը: Այստեղ կարևոր է դասվարի ու ծնողների կամ խնամակալների ամուր կապը: Սա նաև համարվում է երեխայի զարգացման գործում դրական արդյունքի հասնելու երաշխիք:

Մանկավարժական գնահատման առաջադրանքը հանդիսանում է ուղղորդված ու հետևողական ուսումնասիրության արդյունքում սովորողների մտային կարողությունների, նրանց անհատական ուժեղ և թույլ կողմերի բացահայտումն ու առանձնակի մոտեցման եղանակների հայտնաբերումն ու կիրառումը:

Այսօրվա հասարակությունում կայացած անձիք առավել քան երբևէ հարկավոր է ինքնուրույն մտածելու, խնդրին համակողմանիորեն մոտենալու ու լուծելու կարողությունների ու հմտությունների տիրապետում:

Այս գործում կարևոր դեր ունի սովորողների անհատական գնահատումը:

Կրթական գնահատումը ուսումնական գործընթացի և ուսումնական արդյունքների բացահայտման միջոց է: Այն օգնում է պարզել յուրաքանչյուր սովորողի գրտելիքների,կարողությունների և դիրքորոշումների մակարդակը՝ անծանոթ իրավիճակում կողմնորոշվելու հմտությունները:

″Գնահատում″ բառը գործածության մեջ է մտել անցած դարի հիմնական թվականներին և լայն հասկացություն է, որը նկարագրում է ցանկացած գործունեություն, որը նպաստում է ուսման գործընթացի խթանման կարգավորմանը և վերահսկմանը:

Ընդհանուր առմամբ, բարձրորակ գնահատականեր են համարվում բարձր հուսալիությամբ գնահատականները: Հուսալիությունը վերաբերվում է գնահատման հետևողականության, որը կրտսեր դպրոցականի համար ուսումը շարունակելու, աշխատասիրությունը բարձրացնելու կարևորագույն խթան է հանդիսանում:Եթե ուսուցիչը իր սուբյեկտիվ մոտեցմամբ չի խրախուսում աշակերտին, ապա կարող է ունենալ ուսման նկատմամբ անտարբերություն:

ՈՒսումնառության ընթացվքում իրականացվող գնահատումը գործընթաց է, որով բացահայտվում և վերլուծությունների միջոցով վերահսկվում են ուսուցման արդյունքների որակը և դրանց համապատասխանությունը պետական կրթական չափորոշչի պահանջներին:

Կրտսեր դպրոցի բարեփոխման արդի փուլում, երբ ուսուցման գերական նպատակը դպրոցականի անձի զարգացումն է, աշակերտի ձեռքբերումները գնահատելու համար առաջադրվում են հետևյալ չափանիշները.

- առարկայական գիտելիքների, կատարողություն, հմտությունների յուրացման որակը, դրանց համապատասխանությունը պետական չափորոշիչների պահանջներին:
- Կրտսեր դպրոցականի ուսումնական գորշունեության ձևավորվածության մակարդակը:
- Մտածական գործընթացների զարգացման մակարդակը (դիտումներ կատարելու, վերլուծելու, համեմատելու, դասակարգելու, ընդհանրացնելու, մտքերը կապակցված շարադրելու, ուսումնական խնդիրը ստեղծագործաբար լուծելու և այլ կարողություններ):

- Ճանաչողական ակտիվության, հետաքրքրությունների, ուսումնական գործունեության նկատմամբ վերաբերմունքի զարգացման մակարդակը, վարքային դրսևորումները:

Վերոհիշյալ չափանիշները՝ իբրև, ուսուցման-ուսումնառության արդյունք, գնահատվում են միավորային գնահատմանբ, իսկ իբրև ուսումնառության գործընթաց բառայինբնութագրումներով:

Գիտելիքների, հմտությունների, կարողությունների ցանկացած ստուգում պետք է որոշվի ուսումնասիրված նյութի բնույթով ու ծավալով, ինչպես նաև ածակերտի ընդհանուր զարգացման մակարդակով:

Գնահատման նոր հասցեակարգի համաձայն՝ սովորողների ուսումնառության արդյունքները պարզելու համար դպրոցներում ներդրված գնահատման բաղադրիչներից կառանձնացնենք հետևյալ տեսակները.

1. բանավոր հարցում,
2. թեմատիկ գրավոր աշխատանք,
3. գործնական աշխատանքը II-IV դասարաններում:

Բանավոր հարցում

ՈՒսումնառության ողջ ընթացքում ուսուցչի կարևոր խնդիրն է զարգացնել աշակերտի տրամաբանությունը, երևակայությունը, բանավոր խոսքը, իր սեփական մտքերը շարադրելու ունակությունը: Այս կարևոր շղթայում իր յուրօրինակ դերն ունի բանավոր հարցումը:

Բանավոր հարցումը գնահատման բաղադրիչի այն տեսակն է, որի ժամանակ աշակերտը ներկայացնում է իր յուրացրած նյութը (գիտելիքները, կարողությունները, հմտությունները, ինչպես նաև սեփական դիրքորոշումը):

Բանավոր հարցումը ունի իր ուրույն նպատակները.

- նպաստում է սովորողի մտածողության, դիտողականության, ուշադրության զարգացմանը,
- օգնում է յուրացնելու տեսական շատ հարցեր,
- զարգացնում է բանավոր խոսքը, հղկում մաթեմատիկական լեզուն,
- հնարավորություն է տալիս աշակերտներին արտահայտվելու, ճշգրտելու իր իմացածը՝ հետագայում դա անսխալ գրավոր աշխատանքում կիրառելու համար:

Ինչպես ասել է Վ. Պուրոկուրուն՝ «Ինչքան շատ ենք խոսում, այնքան շատ ենք սովորում»:

Բանավոր հարցում անցկացվում է դասի տարբեր փուլերում: Կարևորը այստեղ դասարանում առողջ մթնոլորտի ստեղծումն է , երբ աշակերտները կարողանում են լսել միմյանց ու սովորել իրարից:

Շատ կարևոր է ուսուցչի, ինչպես նաև աշակերտների փոխադարձ ճիշտ հարցադրումները:

Բանավոր հարցումը իր տևողությամբ կարող է լինել՝

1. կարճատև (2-3 ր)
2. ծավալուն (3-5 ր)

Տարրական դասարաններում բանավոր հարցումը լինում է՝

1. առանձին աշակերտների բանավոր հարցում
2. խմբային և համագործակցային աշխատանքներ
3. խաղային տեխնոլոգիաների կիրառում
4. տնային աշխատանքների բանավոր քննարկում:

Բանավոր հարցման գնահատման չափանիշները

Տարրական դասարաններում բանավոր հարցումը գնահատվում է ըստ նոր ՀՊՉ-ի սահմանած կարգի՝ միավորային և բնութագրող:

Բանավոր հարցում կարելի է անցկացնել անհատական քարտերի (տես հավելվածը) միջոցով՝ ինչպես կարճատև, այնպես էլ՝ ծավալուն: Ծավալուն բանավոր հարցում կազմակերպելիս աշակերտը ստանում է անհատական քարտը, մտածելուց հետո պատասխանում:

Բանավոր հարցում կարելի է կազմակերպել տարբեր ձևերավ՝ խաղային տեխնոլոգիաների կիրառմամբ (տես հավելվածը), խմբային և համագործակցային աշխատանքների կիրառմամբ (տես հավելվածը):

Գործնական աշխատանքը II-IV դասարաններում

Միավորային գնահատման բաղադրիչ է հանդիսանում գործնական աշխատանքը, որի դեպքում աշակերտները իրենց տեսական գիտելիքները կիրառում են գործնականում:

Գործնական աշխատանքի էությունը հիմնականում կայանում է՝

1. զարգացնել երեխաների ձեռքերի մանր մկանները,
2. ուշադրությունը, դիտողականությունը, տարածական պատկերացումները,
3. այն նպաստում է ստեղծագործական և կառուցողական պատկերացումների զարգացմանը,
4. աշակերտը կարողանում է «կարդալ» գծագրերը:

Քանի որ «Մաթեմատիկա»-ն համարվում է կյանքի հիմնական զարգացման շարժառիթը, ուստի շատ կարևոր է ճիշտ կազմակերպել յուրաքանչյուր դասարանային համապատասխան գործնական աշխատանքներ:

Գործնական աշխատանքի տեսակներն են՝

1. երկրաչափական պատկերների կառուցումը,
2. մեծությունների չափում,
3. պատկերի բաժանումը մասերի:

Թեմատիկ գրավոր աշխատանքը որպես գնահատման բաղադրիչ

Թեմատիկ գրավոր աշխատանքը գնահատման բաղադրիչի մի տեսակ է, որում աշակերտն իր յուրացրած նյութը ներկայացնում է գրավոր ձևով:

Թեմատիկ գրավոր աշխատանքը տրվում է չափորոշչային պահանջների յուրացման աստիճանը ստացող առաջադրանքներից:
Ծավալուն գրավոր աշխատանքի տևողությունը 40-45 րոպե է, իսկ քանակը կիսամյակի ընթացքում 4-5 անգամ:
Առաջադրանքները կարող են լինել՝

1. մաթեմատիկական թելադրություն,
2. վարժություններ,
3. խնդիրներ,
4. գործնական աշխատանքներ:

Թեմատիկ գրավոր աշխատանքը տրվում է հիմնականում թեստերով:
Աշխատանքը տրվում է ամբողջ դասարանին:
Նպատակն է՝ ստուգել ուսումնասիրված ենթաթեմաներից սովորողների ստացած գիտելիքները:
«Մայրենի» առարկայից ստուգման և գնահատման համակարգն ստանձնում է դպրոցականի և ուսումնական միջավայրի խթանող ի և կարգավորողի դեր: Գնահատման նոր համակարգի համար ամրագրվել են հետևյալ կարևոր գործառույթները՝

- ճշգրտել սովորողի հետ տարվող անհատական աշխատանքի բովանդակությունը,
- հայտորոշել ուսուցման ընթացը և արդյունքները,
- սշաղկապել ուսումը ուսումնառության հետ,
- վերահսկել ուսուցման գործընթացը և արդյունքները:

«Մայրենի» առարկայից միավորային գնահատման տեսակները՝

Բանավոր հարցում

- արձակ և չափածո տեքստերի գեղարվեստական ընթերցանություն,
- աշխատանք տեքսերի շուրջ,
- տեքսի բովանդակության վերարտադրություն (չափածո և արձակ հատվածներ):

Բանավոր հարցման տևողություն պետք է լինի 3 րոպե: Կիսամյակի ընթացքում պետք է կատարվի 6 բանավոր հարցում:

Թեմատիկ գրավոր աշխատանք

- արտագրություն,
- թելադրություն,
- շարադրություն,
- կարճ պատասխան պարունակող աշխատանքներ՝ թեստեր:

Թեմատիկ գրավոր աշխատանքի տևողությունը՝ 25-30 րոպե, քանակը կիսամյակի ընթացքում 3: Ստուգման յուրաքանչյուր տեսակ ներկայացվում է տարբեր բնույթի և տիպի առաջադրանքներով: առաջադրանքների կիրառումը իրականացվում է երկու եղանակով՝ բանավոր, գրավոր:

Բանավոր հարցումը՝ որպես գնահատման բաղադրիչ

Բանավոր հարցումը ենթադրում է սահուն, գիտակցված (հասկանալով) և արտահայտիչ կարդալու կարողության ստուգում, որոնք կապվում են գեղարվեստական ստեղծագործության ընկալման ու տեքստի նկատմամբ վերլուծական և գնահատողական աշխատանք կատարելու հետ:

Ընթերցողական կարողություններն են՝

- կարդալու եղանակը (բառերով, վանկերով և տառերով)
- տեմպը
- ճշգրտությունը

Այս կարողությունները ձևավորվում են աստիճանաբար:

Բանավոր հարցման գնահատման նպատակով առաջադրվում են այնպիսի չապանիշներ՝ ինչպիսինք են կարդալու կարողությունները, որոնք նշված են վերևում:

Այսպիսով՝ բանավոր հարցումը աշակերտի յուրացրած նյութի բանավոր շարադրումն է:

Դա կարող է լինել տեքստի ընթերցանություն , տեքստի շուրջ աշխատանքի, զրույցի, աշակերտի պատմելու, բացատրության, անգին արտասանության, փորձի կամ զննումների վերաբերյալ հաղորդումների ձևով:

Թեմատիկ գրավոր աշխատանքներ

Թեմատիկ գրավոր աշխատանքները տրվում են հիմնական թեման կամ թեմաները ուսումնասիրելուց հետո: Նպատակը՝ ստուգել սովորողների կողմից տվյալ թեմայի ձեռքբերումները, գիտելիքները, կարողություններն ու հմտությունները, ինչպես նաև դիրքորոշումները:

Թեմատիկ գրավոր աշխատանքը ամփոփիչ գնահատման ձև է , որի ընթացքում սովորողն իր գիտելիքները ներկայացնում է գրավոր:

Թեստային աշխատանքում պետք է ընդգրկվեն սովորողներին ներկայացվող չափորոշչային պահանջներին համապատասխան առաջադրանքներ.

1. ճիշտ պատասխանի ընտրության,
2. համապատասխանություն պահանջող,
3. լրացում պահանջող,
4. կարճ պատասխանով,
5. ընդարձակ պատասխանով:

Թեմատիկ գրավոր աշխատանքի՝ թեստի հիմնական հատկորոշիչները

- Ո՞ր դասարանի համար է նախատեսված:
- Ո՞ր թեմայի կամ թեմաների վերաբերյալ է կազմված:
- Ի՞նչ կոնկրետ նպատակ է հետապնդում:
- Ո՞ր վերջնարդյունքներն են ստուգվելու:
- Ի՞նչ տիպի առաջադրանքներ են մշակվելու:
- Ի՞նչ սկզբունքով «պարզից-բարդ» է կազմված լինելու:

- Ի՞նչ տեսակի առաջադրանքներ են ներառվում յուրաքանչյուր տեսակից քանի հատ:
- Որքա՞ն ժամանակ է հատկացվելու թեստին:

Անհատական բանավոր հարցման միջոցով ուսուցիչն ուսումնական գործընթացում պարբերաբար ստուգում է աշակերտների գիտելիքները, կարողություններն ու հմտությունները և գնահատում, ինչն իրեն հնարավորություն է տալիս պարզելու, թե ինչպե՞ս են աշակերտները յուրացրել նոր նյութը, ի՞նչ դժվարությունների են հանդիպել: Դրանով նաև ուսուցիչը ստուգում է, տե ինքն ի՞նչ հաջողությամբ է աշխատել, որքանո՞վ են ճիշտ այն մեթոդական հնարները, որոնք նա կիրառել է:

Ըստ այդ ստուգման արդյունքների՝ ուսուցիչը կարող է անհրաժեշտ փոփոխություն ներմուծել իր աշխատանքում:

Բանավոր հարցում կարելի է անցկացնել անհատական քարտերի միջոցով՝ ինչպես կարճատև, այնպես էլ՝ ծավալուն հարցում կազմակերպելիս (աշակերտը ստանում է անհատական քարտը, մտածելուց հետո՝ պատասխանում):

Օրինակ.

Քարտ 1.

Դասարանը՝ II

Թեման՝ Աղյուսակային բազմապատկում և բաժանում:

Նպատակը՝ Աշակերտը կկարողանա համադրելու միջոցով գտնել «ավելորդը»:

Դիտարկի՛ր օրինակները:

Ընջի՛ր «ավելորդը» յուրաքանչյուր սյունակում.

63:7		9·7
56:8	6·6	
48:8	7·7	
24:8	5·7	

Քարտ 2.

Դասարանը՝ II

Թեման՝ Թվային արտահայտություններ:

Նպատակը՝ Աշակերտը կկարողանա գտնել թվային արտահայտությունների նմանություններն ու տարբերությունները, կդասակարգի այդ արտահայտությունները և կհաշվի դրանց արժեքները՝ պահպանելու գործողությունների կարգը:

ա. Կարդա՛ արտահայտությունները: Ինչո՞վ են դրանք նման, և ինչո՞վ՝ տարբեր: Ինչպիսի՞ երկու խմբի կարելի է դրանք բաժանել:

1) 16-9+8	**3)**18-(12-4)	**5)** 18:9·5
2) 2·6:4	**4)**24+16-25	**6)** 50-(15+15)

Բ. Գտի՛ր **թիվ 2**, **թիվ 4** և **թիվ 6** արտահայտությունների արժեքները:

Քարտ 3.

Դասարանը՝ III

Թեման՝ Թվագրության ոչ դիրքային համակարգեր:

Նպատակը՝ Աշակերտը կամրապնդի գիտելիքները՝ Թվագրության ոչ դիրքային համակարգերի վերաբերյալ:

1. Ինչպիսի՞ թվեր են գրված.

   XXV, XVII, XXXII:
2. Կարդա՛ դրանք:
3. Գրի՛ր այդ թվերն արաբական թվանշաններով:
4. Վերականգնի՛ր հավասարությունը՝ տեղափոխելով միայն մեկ հաշվեձողիկ.

   IV-V=I

Բանավոր հարցում կատարելիս անհատական քարտերի մեջ կարելի է ընդգրկել նաև **աղյուսակներ**, քանի որ աշակերտները մեծ հետաքրքրությամբ են աշխատում դրանցով. «կարդում է» աղյուսակը, գտնում են պահանջվող տվյալները, ձեռք են բերում աղյուսակներով աշխատելու կարողություններ և հմտություններ:

Քարտ 12.

Դասարանը՝ II

Թեման՝ Շաբաթվա օրեր:

Նպատակը՝ Աշակերտը կկարողանա «կարդալ» աղյուսակը, ձեռք Կբերի աղյուսակով աշխատելու կարողություններ և հմտություններ:

Շաբաթվա օրը	**Պահածոներ**	
	Ձկան	**միս**
Երկուշաբթի	3	2
Երեքշաբթի	-	4
Չորեքշաբթի	7	-
Հինգշաբթի	1	5
Ուրբաթ	-	-
Շաբաթ	6	-
Կիրակի	4	4

1. Ընդամենը քանի՞ տուփ պահածո կերան զբոսաշրջիկները երկուշաբթի, հինգշաբթի և կիրակի օրերին:
2. Շաբաթվա ո՞ր օրերին նրանք կերան միայն մսի պահածո, ո՞ր օրերին՝ միայն ձկան:
3. Ո՞ր օրերին նրանք ընդհանրապես պահածո չկերան:
4. Ո՞ր օրերին է շատ պահածո սպառվել, ո՞ր օրերին՝ քիչ:
5. Հանգստյան օրերին քանի՞ պահածո են կերել:
6. Ո՞ր օրերին են միայն մեկ տեսակի պահածո կերել:

Բանավոր հարցում կարելի է կազմակերպել նաև **բանավոր հաշիվ** կատարելիս՝ աշակերտներին ուղղված հարցերով: Այս աշխատանքում ուսուցիչն ընդգրկում է ամբողջ դասարանը, սակայն գնահատում է այն աշակերտներին, որոնց այդ օրը նպատակ ունի գնահատելու:

Քարտ 15.

Դասարանը՝ III

Թեման Եռանիշ թվեր: Գործողությունների դրանց հետ:

Նպատակը՝ Աշակերտը կամրապնդի եռանիշ թվերի և դրանց հետ կատարվող գործողությունների վերաբերյալ իր գիտելիքները:

ա. Գտի՛ր 500 և 70 թվերի տարբերությունը:
բ. Գտի՛ր 340 և 50 թվերի գումարը:
գ. 720-ը փոքրացրու՛ 700-ով:
դ. 360-ը փոքրացրու՛ 2 անգամ:
ե. 420-ը մեծացրու՛ 80-ով:
զ. Մեծացրու՛ 170-ը 3 անգամ:
է. Քանիսո՞վ է 290-ը մեծ 150-ից:

ը. Գտի՛ր 370 և 14 թվերի տարբերությունը:

Խաղային տեխնոլոգիաների կիրառմամբ.

Խաղային տեխնոլոգիաները լավագույն միջոց են բանավոր հարցում կազմակերպելու գործում:

Օրինակ՝ ստուգելու համար, թե որքանո՞վ են աշակերտները յուրացրել երկնիշ թվերով կատարվող գործողությունները (գումարում, հանում, բազմապատկում, բաժանում), ուսուցիչը կարող է կազմակերպել հետևյալ խաղը.

ՈՒ՞մ ձեռքն է թիվը

Դասարանը՝ II

Թեման՝ Երկնիշ թվեր և գործողություններ դրանց հետ:

Նպատակը՝ Զարգացնում է ուշադրությունը, հաշվումներ կատարելու կարողություններն ու հմտությունները:

Անհրաժեշտ պարագաներ՝ Քարտեր:

Ընթացքը.

1. Քարտերը նախօրոք պատրաստվում են, կտրատվում և սոսնձվում ստվերաթղթի վրա:
2. Յուրաքանչյուր աշակերտ ստանում է մեկ քարտ:
3. Խաղավարի ընտրությամբ որևէ աշակերտ կարտում է իր քարտի վրա գրված առաջադրանքը:
4. ՈՒշադրություն է դարձվում, որ աշակերտները կարողանան թվերը ճիշտ մեծացնել կամ փոքրացնել մի քանի անգամ և մի քանիսով:
5. Աշակերտները պետք է ուշադիր լինեն, որ կարողանան որոշել՝ արդյոք հարցի պատասխանն իրենց ձեռքի՞ն է, թե՞ ոչ: Հետո ընթերցում են իրենց քարտի հարցը: Օրինակ. « Իմ ձեռքին 10 թիվն է, ու՞մ ձեռքին է այն թիվը, որը 2 անգամ մեծ է իմ թվից»: Այն աշակերտը, ում ձեռքին 20 թիվն է, պետք է կարդա. « Իմ ձեռքին 20 թիվն է», հետո կարդա իր քարտի հարցը, և այդպես շարունակ:

Իմ ձեռքին 20 թիվն է: ՈՒ՞մ ձեռքին է այն թիվը, որն իմ թվից մեծ է 10-ով:	Իմ ձեռքին 30 թիվն է: ՈՒ՞մ ձեռքին է այն թիվը, որն իմ թվից մեծ է 2 անգամ:	Իմ ձեռքին 60 թիվն է: ՈՒ՞մ ձեռքին է այն թիվը, որն իմ թվից փոքր է 20-ով:
Իմ ձեռքին 40 թիվն է: ու՞մ ձեռքին է այն թիվը, որն իմ թվից մեծ է 2 անգամ:	Իմ ձեռքին 80 թիվն է: ՈՒ՞մ ձեռքին է այն թիվը, որն իմ թվից մեծ է 10-ով:	Իմ ձեռքին 90 թիվն է: ՈՒ՞մ ձեռքին է այն թիվը, որը 40-ով փոքր է իմ թվից:

Իմ ձեռքին 50 թիվն է: ՈՒ՞մ ձեռքին է այն թիվը, որն իմ թվից փոքր է 20-ով:	Իմ ձեռքին 30 թիվն է: ՈՒ՞մ ձեռքին է այն թիվը, որն իմ թվից մեծ է 30-ով:	Իմ ձեռքին 60 թիվն է: ՈՒ՞մ ձեռքին է այն թիվը, որն իմ թվից մեծ է 3 անգամ:
Իմ ձեռքին 20 թիվն է: ՈՒ՞մ ձեռքին է այն թիվը, որն իմ թվից մեծ է 4 անգամ:	Իմ ձեռքին 80 թիվն է: ՈՒ՞մ ձեռքին է այն թիվը, որն իմ թվից մեծ է 2 անգամ:	Իմ ձեռքին 40 թիվն է: ՈՒ՞մ ձեռքին է այն թիվը, որն իմ թվից փոքր է 2-ով:

Խմբային ու համագործակցային աշխատանքների կիրառմամբ.
Խմբային ու համագործակցային աշխատանքների միջոցով բանավոր հարցումների անցկացումը հետապնդում է աշակերտների մեջ հաղոր-դակցական, սոցիալական և համագործակցային կարողությունները զարգացնելու նպատակով:

Օրինակ.

Դասարան՝ II

Թեման՝ Խնդիրների լուծում՝ երկրաչափական պատկերների միջոցով:

Նպատակը՝

Աշխատանքը՝

- կզարգացնի աշակերտի տրամաբանական մտածողությունը, հաղորդակցական և համագործակցային կարողությունները,
- կնպաստի համագործակցությամբ խնդիր լուծելու հմտությունների ձևավորմանը:

Աշխատանք՝ ՔԱՌԱԿՈՒՍԻՆԵՐ

Ընթացքը.

1. Աշակերտներին բաժանում ենք 4-5 հոգանոց խմբերի:
2. Յուրաքանչյուր խմբի տրվում է մեկ քարտ՝ իր առաջադրանքով:
3. Աշխատանքի համար տրվում է 5-7 րոպե ժամանակ:
4. Խմբին առաջարկվում է աշխատել միասին՝ խնդրի լուծումը գտնել համատեղ և մշակել քառակուսիների քանակ հաշվելու քայլաշար:
5. Աշխատանքի ավարտից հետո ուսուցիչը յուրաքանչյուր խմբից ընտրում է որևէ աշակերտի, ով գրատախտակին նախօրոք գծված քառակուսու վրա պետք է նշի իրենց խմբի գտած բոլոր քառակուսիների քանակը և ներկայացնի քայլաշարը:

Պատասխանող աշակերտն իր խմբի ներկայացուցիչն է. Նրա հաջողությունը վկայում է այն, թե որքանո՞վ է լավ աշխատել իր խումբը և օգնել յուրաքանչյուրին՝ հասկանալու խնդրի լուծումը:

Քարտ-առաջադրանք.

1. Քանի՞ քառակուսի եք տեսնում ստորև ներկայացվող նկարում:

2. Գտե՛ք այնպիսի պատասխան, որին համաձայն են ձեր խմբի բոլոր անդամները:
3. Համոզվե՛ք, որ ձեր խմբի անդամներից յուրաքանչյուրը պատրաստ է մնացած խմբերին հաղորդել ձեր պատասխանը և բացատրել, թե ինչպե՛ս եք հանգել այդ պատասխանին:

Առաջադրանքը

կատարելուց հետո պետք է քննարկվեն հետևյալ հարցերը.

1. Ինչպե՞ս եք ձեզ զգում խնդիրը լուծելու տարբեր փուլերում:
2. Ձեր կարծիքով՝ ինչպե՞ս օգնեց խումբը գտնել լուծումը:
3. Լա՞վ էիք աշխատում որպես թիմ:
4. Ո՞վ էր բոլորից ակտիվը, ո՞վ՝ պասիվը:
5. Արդյոք կարծու՞մ եք, թո աշխատանքի ընթացքում խմբի անդամները տարբեր դերեր կատարեցին:

Համագործակցային այս աշխատանքի գնահատումը կարելի է կատարել հետևյալ կերպ. Խմբի աշխատանքը ներկայացնող աշակերտի գնահատականը տարածել խմբի յուրաքանչյուր անդամի վրա:

Այսպիսով՝ բանավոր հարցումների ճիշտ կազմակերպումը կօգնի իրականացնել ծրագրային և չափորոշչային պահանջներն ու մաթեմատիկայի ուսուցման գործընթացը կդարձնի ավելի հետաքրքիր ու արդյունավետ:

Եզրակացություն

Այսպիսով, գնահատումը կարևորվում է այնքանով, որ այն հնարավորություն է տալիս անմիջական հետադարձ կապ պաշտպանել, դրանով ուղղորդել ու խթանել սովորողի անընդհատ զարգացման գործընթացը:

Բոլոր զարգացած ու առաջատար երկրների հիմնախնդիրների ուշադրության կենտրոնում համարվում է կրթությունը և կրթական համակարգը:

Համաշխարհային կրթական քաղաքականությունը ուսումնասիրում ու գնահատման նոր ձրեր է մշակում, ինչը առավել նորարարական է ու համապատասխանում է այսօրվա զարգացող անհատի հոգեվիճակին ու սոցիալտնտեսական պահանջներին: Այդ ամենի նպատակը սեփական երկրի կրթական մկարդակի բարձրացումն է և միջազգային տարբեր կառույցներում իր անհատի գիտականորեն մրցունակության ապահովումն է: Գնահատման առանցքայինկարևորությունն այստեղ կայանում է նրանում, որ անընդհատ փոխադարձ կապի համատեքստում ուսուցիչ- աշակերտ կապը միասնական լուծումներ է գտնում:Այսինքն այն անհատի մոտ արթնացնում է այն գիտակցությունը, որ ինքը մաս է և ունակ է իր գիտելիքներն ու հմտությունները զարգացնելով հասնել ու մասնակից լինել կրթական համակարգի զարգացման գործում: Սա հատկապես կարևորվուն է մեր երկրի քաղաքացիների համար, քանզի մեր գիտական մտքի ճկունությունն դարեր ի վեր եղել է մեր պահպանման ու զարգացման հիմնական միջոցը:

Սովորողներին ճիշտ ու արդարացի գնահատումը համարվում է ժամանակակից մանկավարժա-հոգեբանական գիտության կարևորագույն մարտահրավերներից մեկը:

Հետազոտողներին մտահոգում է, թե ինչպիսի՞ մեթոդներով է հնարավոր իրականացնել սովորողների լիարժեք գնահատումը: Այն իր հիմքում ներառում է յուրաքանչյուր անհատ սովորողի հանդեպ առանձնահատուկ ուշադրության հատկացում, անհատական մոտեցումների անհրաժեշ-տության նպատակային կիրառում, որն հանգեցնում է արժեհամակարգի և դիրքորոշման բարելավմանը: Սա բարդ և հետևողական աշխատանք է, որն իր մեջ ներառում է բազմազան ու բազմակողմանի գործոնների դիտարկում և քննարկում:

Ինչպես վերը նշվեց գնահատումը, նրա տարատեսակների ընտրությունը, զուգակցումը տարբեր հարթությունների հմտությունների ու կարողությունների անհատական պահանջներից բխող նրբությունների հետ տալիս է լավագույն արդյունք:

Հարկավոր է ուսման և ուսուցման գործընթացը դիտարկել որպես անընդկատ շարժվող դինամիկ գործառույթ-երևույթ, որն ենթադրում է ժամանակի, կարողությունների ու հմտությունների ազդեցություն:

Գրականություն

- ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանը՝ հանրակրթական հաստատության սովորողի ուսումնական առաջադիմության գնահատում:
- Աշակերտների ինքնուրույն աշխատանքների կազմակերպումն ու գնահատումը «Մայրենի 2» Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, Ս. Մուսայելյան, Երևան, «Արևիկ» 2009:
- Միավորային գնահատումը II-IV դասարաններում «Մաթեմատիկա» Սոնա Սարգսյան, Մարինե Մանուկյան, Լիզա Աթոյան Երևան, «Արևիկ» 2009: